№ 11 Հինգշաբթի Յունվարի 28 — 1888 — Հինգշաբթի Յունվարի 28 № 11

ՏԱՍՆ ԵՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՆԵՐԿԱՅ 1888 ԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։ Մենք կը ստանանք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 *ռուբլի է, վեց ամսվանը 6 ռուբլի։*

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնակայա և Բազարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը։)

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» *գրվելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցէով.* ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», *իսկ արտասահմանից.* Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

*Առևտրական ուսումնարան.—*ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. *Նամակ Բագուից. Ներքին լուրեր.—*ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. *Գերմանիայի և Աւստրիայի դաշնադրութիւնը. Արտաքին լուրեր.—*ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. *Նամակ Թիւրքիայից.*

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

—

Ընթերցողներին արդէն յայտնի է, որ այս օրերս Թիֆլիսի առևտրական վարչութիւնը ընդհանուր ժողովի առջև յարուցել է Թիֆլիսում առևտրական դպրոց հիմնելու հարցը։ Բայց այդ դպրոցի հաստատութեան իրագործումը յետաձգվեցաւ նիւթական միջոցների պակասութեան պատճառով։

Չէ կարելի չը զարմանալ, որ այնպիսի կարևոր գործի համար, ինչպէս հայերի մէջ մի առևտրական դպրոց հիմնելը, մեր առևտրական դասակարգի մէջ բաւականաչափ գումար չը գտնվեր։ Եթէ առևտրական վարչութիւնը իր գանձարանում դրա համար պատրաստի բաւական դրամ չունի, նոյն առևտրական վարչութիւնը կարող է հանգանակութիւն բաց անել այդ նպատակով ոչ թէ միայն Թիֆլիսի, բայց և օտարաքաղաքացի հայերի մէջ, քանի որ կենտրոնական առևտրական ուսումնարան ունենալը նոյնքան անհրաժեշտ է Շուշու, Բագուի, Երևանի, Նուխու և այլ քաղաքների համար, որքան և Թիֆլիսի համար։

Դարերից ի վեր հայը յայտնի է քաղաքակիրթ աշխարհին որպէս առևտրական ազգ, և պէտք է խոստովանվել որ երկար ժամանակ միմիայն դրանով էր յայտնի,—բայց մի և նոյն ժամանակ հայը առևտրական ազգ, և ընդունակ առևտրական ազգ համարվելով, երբէք չէր հոգում իր զաւակներին, որոնք դիտաւորութիւն ունեն նուիրվել առևտրական գործունէութեանը, տալ մի կանոնաւոր առևտրական դրաւորում։ Սակայն ընդհանրապէս որ հայը բնածին տաղանդ ունի դէպի առևտուրը, նոյն իսկ նրա մէջ հանճար է նշմարվում դէպի այդ գործունէութիւնը, ինչպէս և վկայում են օտարները, աւելի էլ աններելի է որ հայերը մինչև այժմ արհամարհելով կանոնաւոր առևտրական կրթութիւն, յոյս էին դնում միմիայն իրանց բնածին հանճարի վրա։ Ուրեմն եթէ այդ ազգը կանոնաւոր առևտրական դպրոցներ ունենար, հայերը աւելի էլ մեծ աջողութիւն կունենային առևտրական գործունէութեան մէջ, իսկ այժմ, ինչքան էլ բնածին ընդունակութիւն ունենային դէպի առևտուրը, բայց կանոնաւոր առևտրական ուսումից զուրկ լինելով, նրանք աջողվում են միմիայն երբ մենակ են ասպարէզի վրա և մրցող չունեն։ Սակայն մի զօրեղ և քաղաքակիրթ մրցող տարը յայտնվելուն պէս, հայ վաճառականը իր բընածին առևտրական ընդունակութեամբ, առանց հաստատ առևտրական ուսման, ընկճվում է օտարազգի առևտրականի առջև և իր ասպարէզը ամբողջովին նրան է զիջանում։

Թէ հայը բնածին առևտրական տաղանդ, նոյն իսկ հանճար ունի, այդ անհերքելի իրողութիւն է, որ ճանաչված է եղել եւրոպացիներից դարերից ի վեր, նոյն իսկ այն ժամանակ, երբ հայ ազգը ուրիշ ոչնչով յայտնի չէր եւրոպային։ Միջին դարերում եթէ այդ հեռաւոր քրիստոնեայ ազգութիւնը մի որ և է բանով յայտնի եղաւ եւրոպային, դա իր առևտրական ընդունակութեամբ և գործունէութեամբ էր.... Հայոց եկեղեցու և հնադարեան գրականութեան հետ եւրոպան սկսեց ծանօթանալ միայն անցեալ 18-որդ դարում, երբ հայ-կաթոլիկ Մխիթարեան միաբանութիւնը հաստատվեցաւ Վենեցիայի Սուրբ Ղազարի կղզու վրա և սկսեց հնութեան փոշիներից հանել և մշակել հայոց կլասիական գրականութեան գանձերը։

Ոչ թէ միայն առաջ, բայց այժմ էլ, երբ եւրոպացին մի ընդարձակ յօդուած, մի գիրք է գրում հայերի մասին, ամենաաչքի ընկնող յատկութիւնը հայոց ազգի մէջ նա միշտ տեսնում է այդ ազգի առևտրական հանճարի մէջ և այդ յատկութեան վրա է մատնացոյց անում։

Հեռու չը գնանք։ Ընդարձակ և խղճմտաւոր գրուածքը հայերի մասին, որ այս օրերս լոյս տեսաւ Բրիւսսէլում հրատարակվող և ամբողջ եւրոպայում հեղինակութիւն ունեցող մի ամսագրում, այն է „Միջազգային իրաւունքի հանդէս“ (Revue de droit international) վերնագրով ամսագրում։ Գրուածքի հեղինակը, Բօլէն-ժէկմէնս, խօսելով այն բանի վրա որ հայերը և Հայաստանը արժանի կը լինէին եւրոպայի ուշադրութեան և կարեկցութեան, եթէ անշան ազգ էլ լինէին, աւելացնում է որ աւելի էլ արժանի են այդ ուշադրութեան՝ աչքի առաջ ունենալով հայերի ձգտումը դէպի ուսումը, նրանց խելքը, նրանց առևտրական հանճարը, որը ստեղծել է բազմաթիւ հաստատութիւններ թէ իրանց մօտ, թէ Թիւրքիայում, թէ եւրոպայի այլ և այլ երկիրներում և թէ վերջապէս Հնդկաստանում ու Չինաստանում....

Այդպէս են խօսում մեր մասին եւրոպացիք, գլխաւորապէս գնահատելով հայերի առևտրական հանճարը, իսկ մենք ինքներս անտես առնելով կանոնաւոր և հիմնաւոր ուսումը, բաւականանում ենք մեր առևտրական բնածին ընդունակութեամբ, մոռանալով որ բնածին ամենապայծառ առևտրական բնածին ընդունակութիւններ ունեցող մարդն էլ, եթէ կանոնաւոր և հիմնաւոր ուսում չունի, անընդունակ կը լինի մրցել աւելի կրթված տարրի հետ, երբ իրան կը վիճակվի շփվել քաղաքակրթութեան աւելի զօրեղ, տոկուն և ինքնաճանաչ, գիտակցաբար գործող տարրի հետ։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

Յունվարի 24-ին

Բագուից Մարդասիրական ընկերութեան լրագիրներում տպած յայտարարութիւնից ընթերցողը արդէն գիտէ, որ ամսիս 30-ին նշանակված է է նոյն ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը, ուր դրամական հաշիւը ստուգելուց և նոր նախահաշիւ հաստատելուց յետոյ, պիտի զբաղվի ընթացիկ գործերով և նոր նախագահի և խորհրդատուներ ընտրելու համար։

Թէ ինչ հարցեր են զբաղեցնում հասարակութեանը, որոնց կարևոր կը համարեն առաջարկել ընդհանուր ժողովին, այդ որոշակի յայտնի չէ, առ այժմ դրանց մասին խօսողներ չը կան և առհասարակ այդ կողմից նկատվում է մի տեսակ անտարբերութիւն, այն ինչ ամենայն տարի այս ժամանակ երևում էր մի տեսակ իրարանցումն, հետաքրքրութիւն դէպի ընկերութեան գործերը և զանազան շրջաններում դատողութիւններ, վիճաբանութիւններ զանազան հարցերի մասին։ Բայց, բացի այն նոր հարցերից, որոնց կեանքի պահանջները առաջ են բերում, մանաւանդ փոքր ի շատէ մտաւոր կեանքով հետաքրքրվող մի քանի հոգի կարծում են թէ Բագուի հասարակութեան մեջ կան մի քանի հոգի որոնք կարող են ինչպիսի հարցեր առաջարկել։ Ինչպիսի հարցեր կարելի է առաջարկել ընդհանուր ժողովին, դրանց մասին մի քանի խօսք ասելու Մարդասիրական ընկերութեան վերաբերութեամբ։

Թէ ինչ հարցեր են զբաղեցնում հասարակութեանը, որոնց կարևոր կը համարեն առաջարկել ընդհանուր ժողովին, այդ որոշակի յայտնի չէ, առ այժմ դրանց մասին խօսողներ չը կան և առհասարակ այդ կողմից նկատվում է մի տեսակ անտարբերութիւն, այն ինչ ամենայն տարի այս ժամանակ երևում էր մի տեսակ իրարանցումն, հետաքրքրութիւն դէպի ընկերութեան գործերը և զանազան շրջաններում դատողութիւններ, վիճաբանութիւններ զանազան հարցերի մասին։ Բայց, բացի այն նոր հարցերից, որոնց կեանքի պահանջները առաջ են բերում, մանաւանդ փոքր ի շատէ մտաւոր կեանքով հետաքրքրվող մի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, 15 *յունուարի*

Կիլիկիոյ կաթողիկոսական խնդիրն ևս ուշադրութեան առարկայ եղած է։ Հրաւիրեալը յայտարարած են թէ՝ դատական գործոց նախարարութիւնը նպատակ մը ունի, ինչպէս յայտնի կըլլայ, քաջալերել Կիլիկիոյ կաթողիկոսն իր ձգտումներուն մէջ ընդդէմ կենտրոնական իշխանութեան։ Կը կարծուի թէ՝ դատական նախարարութեան նպատակն է միացնել Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը և Պոլսոյ պատրիարքութիւնը մի անձի վրայ, որ այժմ է Մկրտիչ կաթողիկոսը, և ապագային ուրիշ մը—որոյ մասին արդէն գրած եմ։—Արդ՝ Թիւրքիոյ հայերն ս. Էջմիածնայ աթոռէն բաժնելու քաղաքականութիւնը մեծապէս վնասակար է տէրութեան. թողունք զանազան նկատումներն, կը բաւէ ըսել թէ Թիւրքիոյ հայք մեծ կասկածանօք պիտի վարուին այս քաղաքականութեան նկատմամբ, պիտի մարտնչին բուռն կերպով և թշնամական զգացումներ պիտի տածեն այդ քաղաքականութեան հեղինակներու մասին։ Իսկ երբ Մկրտիչ կաթողիկոսի պէս մի անձ է, որ դատական գործոց նախարարութեան յատուկ գգուանաց առարկայ կը լինի, խնդիրը անբացատրելի կըլլայ։

Այստեղ Մեծ-Եպարգոսը չը կրնար զսպել իւր ժպիտն և կը յայտարարէ թէ՝ այդ Մկրտիչ կաթողիկոսին ինչպիսի արարած մը լինելն իրեն ծանօթ է։ Նուրեան էֆէնդի այժ կուտայ Եպարգոսի խօսքերուն և կըսէ թէ երբ ինքն իբրև քոմիսէռ Կիլիկիա գնաց, իւր իրաւասութեանց մէջ էր նաև ի հարկին հեռացնել այդ կաթողիկոս, սակայն ինքն այդ իրաւասութիւնն ի գործ չը դրաւ և այժմ կը մտածէ թէ՝ օր մը դժոխքին մէջ իրմէն հաշիւ պիտի պահանջեն այդ զանցառութեան մասին։

Յետոյ կարգը կուգայ այն քաջալերութեանց, որ օտարազգի կրօնաւորք կը գտնեն Թիւրքիոյ մէջ։ Բաւական ժամանակէ ի վեր, կըսեն, հայոց մէջ այն կարծիքը կը գոյանայ թէ կառավարութիւնը կը նպաստէ կաթոլիկութեան ծաւալման հայոց մէջ։ Այդ կարծիքը կը խռովէ հայոց մըտքերն։ Բայց միւս կողմանէ միթէ տէրութեան նըպաստաւոր է կաթոլիկութեան ծաւալումն Ասիական գաւառներու մէջ։ Այդ կաթոլիկներն չէ՞ որ օր մը ապաւինելով կաթոլիկ տէրութեանց պիտի յաջողին Թիւրքական Փոքր Ասիոյ իւրաքանչիւր գաւառը մէկ մէկ Լիբանանու վերածել։

Հայ հրաւիրեալք քիչ շատ կը խօսին նաև Սահմանադրութեան վրայ և կըսեն որ եթէ Սահմանադրութեան մէջ կը գտնուին այնպիսի կէտեր, որք կը տկարացնեն Պատրիարքարանի իշխանութիւնը, այդ կէտերու մասին ալ անտարակոյս կառավարութիւնը պիտի թոյլատրէ բարեփոխութիւններ։

Մեծ-Եպարգոսը շատ ուշադրութեամբ մտիկ կընէ բոլոր այս ըսուածներն, որք շատ աւելի երկար են. ի վերջոյ կը յայտարարէ, որ կը փափաքի Պատրիարքին հետ ալ տեսակցութիւն մը ընել։ «Կը սիրեմ Պատրիարքը, կըսէ, լաւ մարդ է, խելքը գլուխը, աղէկ եկեղեցական է և գործին հետամուտ։ Ներսէս Պատրիարք թէպէտ խելացի մարդ էր, բայց աւելի դիւանագիտութեամբ (դիբլոմասիի) հետամուտ էր, քան թէ եկեղեցական և կառավարչական գործերու։»

Այս և այսպիսի մի քանի ուրիշ կարծեաց փոխանակութիւնէ վերջ կը մեկնին հրաւիրեալք և օր մը վերջ, երկուշաբթի օր Պատրիարքը կերթայ Մեծ-Եպարգոսին մօտ, նորա հրաւիրմամբն։

Մեծ-Եպարգոսը սիրալիր ընդունելութիւն կընէ Պատրիարքին և կը խօսի ինչպէս որ խօսած էր արդէն հայ հրաւիրելոց, կը յայտնէ կայսեր ցաւակցութիւնը հայոց մէջ պատահած դէպքերու մասին և կը խնդրէ Պատրիարքին, որ իւր ազդեցութիւնը ի գործ դնէ, իւր կղերին հետ միասին, որպէս զի խառնակիչները հեռանան և հայք շարունակեն, ինչպէս միշտ, և այժմ ալ իրենց հաւատարիմ ծառայութիւնները առ տէրութիւնն։

Պատրիարքը կը յայտարարէ թէ՝ ինքն, կղերն ու ամբողջ հայ ազգն հաւատարիմ են և կը մնան կայսեր և տէրութեան, սակայն կը ցաւի որ կառավարութիւնը զինքն այնպիսի վիճակի մը մէջ դրած է, որ կարող չէ ազդու կերպով իւր կղերին վրայ ներգործութիւն ունենալ։ Կրօնական առանձնաշնորհումները կը խլուին և կամ խլելու վրայ են, եկեղեցականք չեն կարող սէր տածել այն Պատրիարքին, որուն օրովն իրենք իրենց հարուստ իրաւունքներէ կը զրկուին. կը կարծեն թէ Պատրիարքը զիրենք պաշտպանելու անկարող է։ Իրեն անհնազանդ եղող վարդապետ մը կը վայելէ կառավարութեան պաշտպանութիւնը, արդ ինչպէս միւսներն իրեն հնազանդելու փափաք ունենան։ Վանայ իշխանութիւնը կը ձերբակալեն եկեղեցականներ, կը կոխեն վանքեր, կը քանդեն խորաններ զէնքեր փնտռելու համար, և սակայն կառավարութիւնն ինձ ամենևին բան մը չը հարցներ։ Ո՞չ ապաքէն իմ իրաւունքս է, կայսերական պէրաթներով, պատժել եկեղեցականները, պէտք եղած ապահովութիւնները տալ կառավարութեան։ Եթէ կուզէիք կրօնական վայրերու մէջ խուզարկութիւններ ընել, պէտք էր ինձ հարցնել և իմ նախաձեռնութեամբ կատարել այդ խուզարկութիւններն։—Կառավարութիւնն ինձ իմաց չը տուաւ, երկնչելով գուցէ որ ես ծածուկ պաշտպանութիւն կընեմ այդ սրբավայրերուն, ուրեմն կառավարութիւնը վստահութիւն չունի իմ վրաս։ Հետևաբար ես կարող չեմ պատրիարքութիւն ընել, քանի որ վստահութեան արժանի չեմ։

Մեծ-Եպարգոսը դարձեալ կը յայտարարէ թէ՝ ինքն Յարութիւն Պատրիարք կառավարութեան վստահութիւնն գրաւած է, և թէ Վանայ մէջ տեղի ունեցած դէպքերն առանց կենտրոնին գիտութեանն է։

հասարակութեան համար, լաւ կը լիներ նոյնպէս և վերադառնալ նոյն իսկ հին հարցերին, որոնք ժողովի կողմից շատ թեթև կերպով են վճռվել, երևան հանել նրանց և կրկին ենթարկել լուրջ քննութեան։ Այդ տեսակ հարցերից կարելի է համարել որդեգիրներ պահելու հարցը, որը երկու տարի առաջ մերժվեց մեծամասնութեան կողմից այն հիման վրա, որ այդ որդեգիրները ընկերութեանը շատ թանգ են նստում և վերջում էլ մի չչափելի օգուտ էլ չեն տալիս։ Շատերը պաշտպանելով որդեգիրներ չունենալու հարցը, առաջնորդվում էին այն մի քանի տխուր օրինակներով, որ ընկերութիւնը մինչև այժմ ունեցել է շատ որդեգիրներ, որոնք աւարտելով իրանց ուսման ընթացքը, այժմ ահագին ռոճիկներով վարում են զանազան պաշտօններ, մոռանալով միանգամայն իրանց բարոյական պարտքը, որ ունեն դէպի հասարակութիւնը և նոյն իսկ այն ընկերութիւնը, որի օգնութեամբ նրանք ուսում են առել։ Այո, դուցէ ցաւալի է նկատել, որ կան այժմ ընկերութեան աւարտած սաներից բժիշկ, հոգևորական, տեխնիկ և այլն, որոնք այժմ փափուկ պաշտօնների մէջ են, բայց մինչև օրս դեռ ոչինչով չեն ապացուցել իրանց երախտագիտութիւնը դէպի այն հիմնարկութիւնը, որը եղել է նրանց առաջ գնալու պատճառը, և ոչ միայն չեն նպաստել ընկերութեան մի աչքի ընկող օգնութեամբ, այլ նոյն իսկ շատ փոքր կերպով, վճարելով ընկերութեան դոնէ հինգ ռուբլի, իբրև ընկերութեան տարեկան անդամ։ Բայց միթէ մի քանի այդպիսիները աչքի առաջ ունենալով, պէտք է զրկել բազմաթիւ երիտասարդներին, որոնք օգնութեան կարօտ են և անդադար դիմում են ընկերութեանը։ Վերջապէս միթէ ընկերութիւնը օգնում է՝ փոխադարձաբար յետ ստանալու համար միայն. միթէ ամեն մի գործունէութիւն երախտագիտութիւն պէտք է սպասէ։ Բացի դրանից ընկերութիւնը կարող է մի որոշ չրջանի մարդկանց օգնել, եթէ ուզում է որ նրանք ծառայեին հասարակական հիմնարկութիւններին, այդպէս, օրինակ, կարելի էր հոգալ լաւ ուսուցիչներ պատրաստելու մասին. և ինչու չը պէտք է նպաստել այնպիսի երիտասարդներին, որոնք ցանկանում են ուսուցչական պաշտօնին նուիրվել։ Վերջինիս

ռութիւնը. ցանկալի է, որ ուսուցիչներ պատրաստելու հարցը երևան գալով, ունենար և ջերմ պաշտպանողներ, մանաւանդ այժմ, երբ պահանջվում են օրինական վկայական ունեցող ուսուցիչներ։ Մի խօսքով միթէ սկզբունքը կարելի է զոհել դէպքերին։

Ցանկալի է առհասարակ, որ Մարդասիրական ընկերութիւնը՝ իր ընդհանուր ժողովի ժամանակ առանձին ուշադրութիւն դարձնէր այդ և այդ տեսակ կարևոր հարցերի վրա, և չը բաւականանար իր տարեկան մի քանի հազարը պատահական գործերի վրա ծախսելով միայն։

Անկասկած, ընկերութեան գործունէութեանը չօչափելի կերպարանք տալու համար մեծ նշանակութիւն ունեն նախագահը և խորհրդի անդամները, որոնց ընտրութիւնը պէտք է կատարվի առաջիկայ ընդհանուր ժողովին։ Այդ պատճառով, կարծում ենք, որ չը նայած այս բոպէիս նկատվող անտարբերութեան, ժողովի օրը, ընկերութեան ժողովատեղին լի կը լինի Բագուի հասարակութեան ներկայացուցիչներով, որոնց պարքն է, գէթ տարին մի անդամ, միասին հոգալ Մարդասիրական ընկերութեան մասին, արտայայտել այն պահանջները, որոնց լուծիւն տալը այժմ դգալի է, և վերջապէս ընտրել այնպիսի ղեկավարներ ընկերութեան համար, որոնց մասին կարելի լիներ ասել, որ նրանք կարող են իրականացնել այս կամ այն օգտաւէտ մտադրութիւնները, և ընդհանուր ժողովը կարող է իր գիտողութիւններով մի ընդհանուր պրոգրամա տալ վարչութեանը։ Այդ պրոգրամայի մանրամասնութիւնների մէջ մենք չենք մտնում հասարակութեանը այդ լաւ յայտնի է։ Ուրեմն մնում է սպասել, որ յունվարի 30-ի ժողովին շտապեն ներկայ լինել տեղական հասարակութեան ներկայացուցիչները, որպէս զի տեսնեն թէ ինչ է արել ընկերութիւնը և որոշեն, թէ ինչ պէտք է անել նա ապագայում։

Զ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Հիւսիսային գործակալութիւնը» հեռագրում է մայրաքաղաքի լրագիրներին, որ Կ. Պոլսի հայոց պատրիարքը յետ է առել իր հրաժարականը։

—

ԻԳԴԻՐԻՑ մեզ գրում են. «Կարմրուկ տարափոխիկ հիւանդութիւնը հերիք չէր, այժմ դիֆտերիտ էլ սկսել է երևալ Իգդիրից 3 վերստ հեռու գտնվող Ալիղամար գիւղում և արդէն մի քանի զոհ է տարել»։

—

Մենք միշտ յայտնել ենք, որ «Մշակը» երբէք ոչ ոքի չենք ուղարկում, եթէ իրանք բաժանորդներ ցանկութիւն չը յայտնեն ստանալ մեր լրագիրը։ Անցեալ տարվայ վերջում ներկայանում է մեր խմբագրատուն մի չուչեղի քահանայ և գրվում է մեր

միւսը Շուշու «Ագուլեցոց» եկեղեցու, իսկ երրորդը նոյն քաղաքի «Ղազանչեցոց» եկեղեցու համար և երեք բաժանորդի համար էլ վճարում է անմիջապէս 30 ռուբլի։ Մենք սկսեցինք կանոնաւոր կերպով ուղարկել համարները յիշեալ հասցէներով։ Այժմ յանկարծ «Ղազանչեցոց» եկեղեցու համարները (№ 7 և 8) յետ ենք ստանում, բանդերոլի վրա փոստային հետևեալ մակագրութեամբ. «за непринятіемъ адресата обратно». Այդ ինչ է նշանակում. մենք կը խնդրէինք հրապարակապէս բացատրութիւն։ Անկարելի է որ ինքն եկեղեցու միաբանութիւնը, որ 10

ռուբլի կանխիկ վճարել է, իր սեփական կամքով ցանկութիւն յայտնելով ստանալ «Մշակը», փողը վճարելուց յետոյ՝ յետ ուղարկէր համարները։

—

Ստացանք Մոզդոկից պ. Գրիգոր Նաղարեանցից, Մոզդոկի մի քանի գործակատարների շրջանում հանգանակած 25 ռուբլի յօգուտ Զէյթունի հրկիզեալների։ Նախկին 331 ռուբլու գումարին աւելացնելով այդ 25 ռուբլին, խմբագրութիւնը կունենայ այժմ իր ձեռքում յօգուտ զէյթունցիների ընդամենը 356 ռուբլի։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Տեղիս նամակատանը վաղուց գործադրվում է մի անյարմար սովորութիւն, դա հետևեալն է։ Շատերը կան, որոնք չիմանալով նամակատան վերաբերեալ խնդիրքներ գրելու ձևը, դիմում են նոյն հիմնարկութեան մէջ մանր ծառայողներին, որ նոքա գրեն։ Վերջիններից ոմանք էլ օգտվելով դէպքից, շատ անգամ անտեղի պահանջներ են անում. օրինակ, մի տաս տող բովանդակող խնդիրքի համար պահանջում են 60 կ., իսկ երբ նոցա նկատում են, թէ դա շատ թանգ է և խնդրում են կատարել մի փոքր պակաս գնով, այն ժամանակ նոքա կոպիտ կերպով պատասխանում են իրանց դիմողներին։ Ցանկալի է, որ նամակատան վարչութիւնը ուշադրութիւն դարձնէր այդ վարմունքի վրա և նշանակէր այդ տեսակ խնդիրքների համար մի չափաւոր վարձ, որը մատչելի լինէր ամենքին»։

—

Արդէն հաղորդել ենք, որ Զօփուր եղբայրների աւազակային խմբի գործը քննվում է Թիֆլիսի նահանգական դատարանում. այդ գործի քննութիւնը արդէն աւարտվեցաւ և դատարանը ամսիս 24-ին հետևեալ վճիռը դուրս բերեց. մեղադրված Բամազ Զօփուրին զրկել բոլոր իրաւունքներից և 13 տարով տաժանակիր աշխատանքների ենթարկել. մեղադրվող Գալուստ և Սարգիս Թելէթովներին բանտարկել $2^1/_2$ տարով. Մնացականեանին զրկելով բոլոր առանձին իրաւունքներից, բանտարկել $3^1/_2$ տարով. մեղադրվողներից երկուսին դատարանը արդարացրեց։

—

[illegible] ռուբլի, խնդրում է «Մշակի» այս տարվայ մի օրինակ ուղարկել իր հայրենի Ցղնա գիւղի հայոց դպրոցին։

—

Յունվարի 27-ին կայացաւ Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան հերթական նիստը։ Անցեալ նիստերի արձանագրութիւնները կարդալուց և հերթական գործերը վերջացնելուց յետոյ ժողովը լսեց մի զեկուցում «Պետական գիւղացիների ձեռքով Անդրկովկասում կապալով հողեր վերցնելու մասին». զեկուցանողը մի ռուս երիտասարդ էր՝ Երմոլաև ազգանունով։ Ի նկատի

ունենալով նիւթի կարևորութիւնը, այլ և այն, որ արդէն բաւական ուշ էր, ժողովը վճռեց վիճաբանութիւնները յետաձգել մինչև յաջորդ նիստը։ Մեր լրագրի միւս համարում կը հաղորդենք այդ զեկուցման ուշադրութեան արժանի կէտերը։

—

Մայրաքաղաքի ռուսաց լրագիրները հաղորդում են, որ մեր յայտնի դերասան պ. Ադամեան այժմ Կիշինեվ քաղաքումն է գտնվում, որտեղ նա ներկայացումներ է տալիս։ Այդ քաղաքումն էլ, լրագիրների խօսքերին նայելով, Ադամեան անասելի աջողութիւն ունի։ Հասարակութեան ոգևորված ցոյցերին չափ ու սահման չը կայ. ներկայացումներից յետոյ էլ հասարակութիւնը ուղեկցում է Ադամեանին մինչև իր բնակարանը անվերջանալի ոգևորված աղաղակներով, բէնգալեան կրակներով և այլն։

—

ԹԻՖԼԻՍԻ մի քանի թաղերում մանուկների մէջ տարածված է սաստիկ կերպով ծաղիկ տարափոխիկ հիւանդութիւնը։ Հիւանդութեան առաջն առնելու և հարկաւոր պեղեկութիւններ ձեռք բերելու համար քաղաքային բժիշկները ոստիկանական աստիճանաւորների հետ շրջում են վարակված տները և արձանագրութիւններ կազմում։ Ցարաքաղաքաբար Թիֆլիսի ատորին դասակարգը, վախենալով այդ բանից, շատ անգամ թաղցնում է ծաղիկով հիւանդացած մանուկներին և այդպիսով անկարելի է լինում ճիշդ տեղեկութիւն ձեռք բերել քաղաքի զանազան մասերում տարածված այդ հիւանդութեան մասին։

—

Շուտով Թիֆլիսի նահանգական դատարանում քննվելու է, ինչպէս հաղորդում են տեղական ռուս լրագիրները, որբերի ատեանի նախկին նախագահ Շանչիեվի գործը, որը մեղադրվում է փողեր վատնելու մէջ։

—

Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, որ մտադրութիւն կայ Դորպատի համալսարանում դասախօսութիւնները ռուսաց լեզուով կարդալ։

—

Ի նկատի ունենալով որ վերջին ժամանակները քաղաքային հասարակական բանկերում կատարվել է [illegible] դէպքերը [illegible], կառավարչական չրջաններում մտադրութիւն կայ, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, օրէնդրական ճանապարհով ձեռք առնել մի չարք նոր միջոցների, այդ զեղծումների առաջն առնելու համար։

—

Յունվարի 30-ին, շաբաթ օր, Թիֆլիսի ժողովարանում յօգուտ Թիֆլիսի վարժուհիների փոխադարձ օգնութեան ընկերութեան կը տրվի մի կօնցերտ, մասնակցութեամբ օպերային երգիչների և երգչուհիների։ Կօնցերտից յետոյ կը լինի պար։

—

պատերազմի տարին Ռուսաց բանակէն, առևտրական նպատակաւ և յետոյ ուղած է վաճառել զայնս թիւրք կառավարութեան և այս բանիս համար ալ դիմած է սպարապետութեան, բայց սպարապետութիւնը անպէտք համարելով զայնս չէ գնած, անկէ ի վեր այնպէս կը մնան փտելու վիճակի մէջ. վաճառականը քանի մը անգամ դիմած է դարձեալ սպարապետութեան և այլուրեք բայց գնող չէ գտած։ Խնդիրն այսպէս ըլլալով ծանր բան մը չը կայ։

Վերջի պահուն տեղեկութիւններ կը ստանանք Քաղաքական և Կրօնական ժողովոց խառն նստին։ Բաւական գործ տեսած են։ Վիճաբանութիւնները շատ տաք եղած են. գլխաւոր որոշումներին եղած է երկու թաքրիր գրել առ կառավարութիւնն. մին Միացեալ-Ընկերութեանց համար և խնդրել որ Միացեալ-Ընկերութիւնք չենթարկուին ո և է նեղութեանց և անխիստ շարունակեն իրենց գործերն։

Միւս թաքրիրով Պատրիարքարանը իր դիտողութիւնները պիտի յայտնէ Վարագայ վանուց և Ալիւր գիւղի եկեղեցւոյ դէմ ի գործ դրուած միջոցներուն վրայ և պիտի պաշտպանէ կրօնական հաստատութեանց անբռնաբարելիութիւնը։

Նոյնպէս այս նստին մէջ վարչութիւնը ընդունած է Իզմիրի առաջնորդին հրաժարականն և մինչև ցընտրութիւն առաջնորդին տեղապահ մը կարգելու հրահանգ տուած է։

Հայկակ

Մեծ-Եպարգոսը այս միջոցին Եօզդադի խնդրոյն վրայ կը խօսի։ Այդ խնդիրը նոր է։ Եօզդադ Կեսարիոյ գաւառին մասն է. ժողովուրդը զանազան պատճառներով, ինչպէս է ամէնուրեք, կաթոլիկութեան դիմելու փորձեր կընէ. Պատրիարքարանէն միջոցներ ձեռք կառնուն արգելելու համար այդ փորձերը։ Վարդապետ մը կը խրկուի անդ այս նպատակաւ և վարդապետը բաւական կաշխատի։ Սակայն Եօզդադէն տեղական իշխանութիւնք կը գրեն աստ թէ վարդապետը ժողովուրդը կը գրգռէ և տեղական իշխանութեանց դէմ հանրագրեր ստորագրել կուտայ։ Մեծ-Եպարգոսն այս խնդիրը կը բանայ և Պատրիարքը զարմացած կը մնայ։ Ոչ մէկուն մտքէն այդպիսի բան մը անցած է. վարդապետը յայտարարած է ժողովրդին թէ՝ ինչ գանգատներ որ ունեն Պատրիարքարանի դէմ, ամենք ալ գրի առնուի և խրկուի Պատրիարքարանին որպէս զի դարմանը մտածուի։ Արդ ինչպէս կարելի է հետեւցնել թէ ժողովուրդ մը որովհետև առաջարկութիւններ կընէ իր պատրիարքին, այդ ժողովուրդը կառավարութեան դէմ կը շարժի։ Եւ Պատրիարքը կը խոստանայ վերադառնալով ի Պատրիարքարան անմիջապէս Եպարգոսին խրկել բոլոր այն թուղթերն որք կը վերաբերին այս խնդրոյն և որոցմէ պիտի տեսնուի թէ վարդապետն ուրիշ բան չէր բրած, բայց եթէ իւր հօրը պաշտպանելու ջանքեր որոց մէջ յաջողած է։ Ի հարկէ այս յաջողութիւնը նախանձ շարժած է։—Երբ Պատրիարքարան կերթայ, Պատրիարքն այդ թուղթերը կը խրկէ։

Այս տեսակցութեան մէջ Պատրիարքը ուրիշ խնդիր մալ կը յարուցանէ, այն է Պատրիարքարանները փոխանակ դատական գործոց նախարարութեան հետ յարաբերութիւն ունենալու, ներքին գործոց նախարարութեան հետ յարաբերութիւն ունենան։ Ատեն մը Պատրիարքարանները Արտաքին գործոց նախարարութեան ենթարկեալ էին. այդ նախարարութիւնը խնդիրները կը քննէր քաղաքագիտական տեսակէտներով, և կը յարգէր առանձնաշնորհումներն, ինչպէս վարժուած էր յարգել օտարազգեաց առանձնաշնորհումներն ալ։ Այդ ժամանակ այսպիսի դժուարութիւններ չէին պատահեր։ Դատական գործոց նախարարութիւնը միշտ օրէնքի հետամուտ է, ամեն խնդիր օրէնքի համեմատ լուծել կուզէ, բայց ինչ են առանձնաշնորհումներն, եթէ ոչ ընդհանուր օրինաց բացառութիւնները։ Ռուսի Պատրիարքին կարծիքը ամեն կերպով օգտակար է որ Պատրիարքարանները ներքին գործոց նախարարութեան մաս կազմեն։

Մեծ-Եպարգոսն այս ամենը տեղեկանալով կը խոստանայ լուրջ խորհրդակցութեանց առարկայ ընել։

Ահա երկու օր վերջ Վահան էֆէնդի Պատրիարքարան կուգայ տեսակցելու համար Պատրիարքին հետ։ Վահան էֆէնդի ուղղակի Կայսեր կողմանէ կուգայ միանգամ ևս Պատրիարքէն լսել ինչ որ նա ըսած է արդէն Մեծ-Եպարգոսին։

Ի հարկէ այդ տեղեկութիւնները մանրամասնաբար պիտի հաղորդուին Կայսեր միանգամ ևս Վահան էֆէնդիի միջոցաւ։ Վահան էֆէնդի յանուն Կայսեր կը յայտարարէ թէ՝ Նորին Վեհափառութիւնը կը սիրէ իւր հաւատարիմ հայ հպատակները, վստահ է նոցա տիրասիրութեանն և հաւատարմութեան մասին, ինչպէս նաև վստահութիւն ունի Պատրիարքին վրա։

Ահա այն լուրերն որք շաբաթէ մը ի վեր շընչասպառ կը պահեն Պոլսոյ հայ ժողովուրդը։ Ուզիղն ըսելով այս դէպքերը լաւ տպաւորութիւն ըրին և ընդհանրապէս յոյս կայ որ նոյն իսկ Կայսեր հրամանաւ քիչ ատենէն իրաց վիճակին մէջ փոփոխութիւններ պիտի մտնեն։ Մի քանի օր է քիչ մը աւելի հանդիստ և աղատ կը շնչեն Պոլսոյ հայք և լաւագոյն օրերու յոյսերը կը տածեն։ Այսօր կիմացուի թէ այն ցանձնաժողովն, որ Շահպազ էֆէնդիի նախագահութեամբ կազմուած էր պալատան մէջ, ցրուած է և թէ յոյս կայ որ մի քանի օրէն ձերբակալեալներն ազատ կարձակուին։ Թէպէտև այսօր կը խօսուի թէ մի քանի ձերբակալութիւնք ևս եղած են, բայց չը կարծուիր որ կարևորութիւն ստանան։ Վերջի օրերու ձերբակալութեանց մէջ քիչ թէ շատ ուշադրութիւն գրաւեց Մեծ-Նոր խանի օտապաչիի ձերբակալումը։ Այդ խանին մէջ սենեակ մը կայ եղեր ուր լեցուած են հրացաններ. ոստիկանութիւնը իմանալով զայս կը ձերբակալէ օտապաչին թէ ինչ նպատակաւ այդքան զէնքեր կը պահեն։ Սակայն քննութեանց արդիւնքէն կիմացուի թէ մի վաճառական գնած է այդ զէնքերը

պատերազմի տարին Ռուսաց բանակէն, առևտրական նպատակաւ և յետոյ ուղած է վաճառել զայնս թիւրք կառավարութեան և այս բանիս համար ալ դիմած է սպարապետութեան, բայց սպարապետութիւնը անպէտք համարելով զայնս չէ գնած, անկէ ի վեր այնպէս կը մնան փտելու վիճակի մէջ. վաճառականը քանի մը անգամ դիմած է դարձեալ սպարապետութեան և այլուրեք բայց գնող չէ գտած։ Խնդիրն այսպէս ըլլալով ծանր բան մը չը կայ։

Վերջի պահուն տեղեկութիւններ կը ստանանք Քաղաքական և Կրօնական ժողովոց խառն նստին։ Բաւական գործ տեսած են։ Վիճաբանութիւնները շատ տաք եղած են. գլխաւոր որոշումներին եղած է երկու թաքրիր գրել առ կառավարութիւնն. մին Միացեալ-Ընկերութեանց համար և խնդրել որ Միացեալ-Ընկերութիւնք չենթարկուին ո և է նեղութեանց և անխիստ շարունակեն իրենց գործերն։

Միւս թաքրիրով Պատրիարքարանը իր դիտողութիւնները պիտի յայտնէ Վարագայ վանուց և Ալիւր գիւղի եկեղեցւոյ դէմ ի գործ դրուած միջոցներուն վրայ և պիտի պաշտպանէ կրօնական հաստատութեանց անբռնաբարելիութիւնը։

Նոյնպէս այս նստին մէջ վարչութիւնը ընդունած է Իզմիրի առաջնորդին հրաժարականն և մինչև ցընտրութիւն առաջնորդին տեղապահ մը կարգելու հրահանգ տուած է։

Հայկակ

Եթէ հաւատանք Պետերբուրգի լրագիրների հաղորդած տեղեկութիւններին, մտադրութիւն կայ 25—50 բուբլի տուգանք վերցնել այն ձայնաւորներից, որոնք առանց յարգելի պատճառների չեն գալիս դումայի նիստերին։ Այդ մտադրութեան նպատակն է վերջ տալ այն անտարբերութեան, որով քաղաքային դումաները վերաբերվում են դէպի հասարակական գործերը։

—

Ստացանք Թիֆլիսարնակ պարոն և տիկին Ս-սայեանցներից 10 բուբլի յօգուտ զէյթունցիների։ Նախկին 356 բուբլու հետ կանի 366 բուբլի, որ ունենք այժմ խմբագրատան մէջ յօգուտ զէյթունցիների։

—

Յունվարի 24-ին, ինչպէս գրում են տեղական ռուս լրագիրները, նորերումս մեր քաղաքը եկած ձեռնածու Բուդիկ իր ընտանիքի հետ միասին՝ Թիֆլիսի կաղետների կորպուսում մի ձեռնածուական ներկայացում տուեց, որը շատ աջող անցաւ և բաւականութիւն պատճառեց ներկայ եղողներին։ Պ. Բուդիկի ձեռնածուութիւնը հիմնվում է գլխաւորապէս ձեռքերի զարմանալի արագաշարժութեան և նրա հմտութեան վրա, և նա զանազան գործիքների օգնութեանը առհասարակ շատ քիչ է դիմում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԵՒ ԱՒՍՏՐԻԱՅԻ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

—

Վարագոյրը բարձրացրած է, և այն, ինչ որ մինչև այժմ և կասկածելի, և անհաւատալի էր թուում, հանդէս է գալիս իբրև հաստատ և անկասկածելի իրողութիւն. դա աւստրո-գերմանական դաշնադրութիւնն է, որի մանրամասնութիւնների երևան հանելը այս բոպէիս առաջին փոթորիկ է բարձրացրել քաղաքական աշխարհում, և որը կարող է մեծ փոփոխութիւններ մտցնել քաղաքական գործերի այժմեան ընթացքի մէջ։ Ահա թէ ինչ է հեռագրում մեզ Բերլինից «Հիւսիսային գործակալութիւնը» յունվարի 23-ից այդ մասին. «Պետական Համբաւաբերի» մէջ տպված է հետեւեալը. Գերմանիայի և Աւստրո-Ունգարիայի կառավարութիւնները վճռեցին հրատարակել 1879 թ-ի հոկտեմբերի 7-ին իրանց մէջ կապած դաշնագիրը, որպէս զի վերջ տրվի այն կասկածներին, որոնք արտայայտվում են նրա լոկ պաշտպանողական բնաւորութեան վերաբերութեամբ։ Երկու կառավարութիւններն էլ ղեկավարվում են խաղաղութիւնը պահպանելու և դրա վրդովողներին դիմադրելու ձգտումով, և նրանք համոզված են, որ դաշնագրի հրատարակութիւնը կը ցրէ այդ մասին եղած բոլոր կասկածները։ Դաշնագիրը ասում է. Յօդուած 1. Եթէ դաշնադրվող պետութիւնների ցանկութեան հակառակ, երկու պետութիւններից մէկը կենթարկվի Ռուսաստանի յարձակմունքին, այն ժամանակ դաշնադրվող կողմերը պարտաւոր են օգնել միմեանց իրանց բոլոր զինուորական ոյժերով, և հաշտութիւն կայացնել ուրիշ կերպ չեն կարող, բայց եթէ միատեղ և փոխադարձ կատարեալ համաձայնութեամբ։ Յօդ. 2. Եթէ երկու պետութիւններից մէկը կենթարկվի մի որ և իցէ ուրիշ պետութեան յարձակմանը, այն ժամանակ միւս դաշնադրվող պետութիւնը պարտաւորվում է չօգնել յարձակվող պետութեանը և կարող է պահպանել յօժարակամ կերպով չէզոք դիրք. սակայն եթէ յարձակվող պետութեանը օգնութիւն ցոյց կը տրվի Ռուսաստանի կողմից, այդ դէպքում 1 յօդուածի մէջ յիշատակված պարտաւորութիւնները զօրութեան մէջ են մընում։ Պատերազմը պէտք է մղվի միատեղ. նոյնպէս և միատեղ պէտք է կայացնվի հաշտութիւնը. Յօդ. 3. Դաշնագիրը պէտք է կրի խաղաղասիրական բնաւորութիւն, և տարաձայնութիւնների առիթ չը տալու համար, պէտք է գաղտնի պահվի. երրորդ կողմին այդ դաշնագիրը կարող է հաղորդվել միմիայն փոխադարձ համաձայնութեամբ։ Երկու դաշնադրվող կողմերն էլ, ի նկատի ունենալով այն զգացմունքները, որ արտայայտեց Կայսր Ալէքսանդր՝ Ալէքսանդրովում տեղի ունեցած տեսակցութեան ժամանակ, յոյս են տածում, որ Ռուսաստանի սպառազինութիւնը դրանց վերաբերութեամբ սպառնացող բնաւորութիւն չի ընդունի, և առ այժմ ոչինչ առիթ չունեն այդպիսի հաղորդագրութիւն անելու։ Սակայն եթէ, սպասածին հակառակ, այդ յոյսը սխալ կը յայտնվի, այն ժամանակ երկու դաշնադրվող կողմերն էլ օրինական պարտաւորութիւն են համարում տեղեկացնելու Կայսր Ալէքսանդրին, որ մի կողմի վրա յարձակվելը, կընդունվի իբրև յարձակում երկու կողմի վրա»։

Պետերբուրգի կիսապաշտօնական «Journal de St. Petersbourg» լրագիրը, ինչպէս մեզ հաղորդեց արդէն հեռագիրը, մատնանիշ անելով այն բանի վրա, որ աւստրո-գերմանական կառավարութեան յայտնութեամբ՝ այդ դաշնագիրը միմիայն պաշտպանողական բնաւորութիւն ունի, որ և դրա հրատարակութեամբ Աւստրիան և Գերմանիան կամենում են միմիայն իրանց խաղաղասիրական ձգտումները արտայայտել,—ցանկութիւն է յայտնում, որ այդ ձգտումները գործադրութիւն գտնեն, այսինքն խաղաղութիւնը պահպանված լինի։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Nord» լրագիրը, ինչպէս հեռագրում է մեզ «Հիւսիսային գործակալութիւնը» Բրիւսելից, այն միտքն է յայտնում, որ Տիսայի ճառը բաւականութիւն չէ տալիս այն սպասելիքներին, որոնք կային նրա վերաբերութեամբ։ Այդ ճառի միայն մի կէտը կարող է Պետերբուրգում գոհացուցիչ համարվել, այդ այն կէտն է, որով հաւատացնվում է, թէ Աւստրիան չէ ձգտում իր հարաւային սահմանները ընդարձակելու. դրա հակառակ, այն կէտի վերաբերութեամբ, որը վերաբերում է բոլգարական հարցին, ամենքը սպասում էին պարզաբանութիւններ այն միջոցների վերաբերութեամբ, որոնցով Վիէննայի կաբինետը հնարաւոր է համարում վերջ տալ Սոֆիայում տիրող այն դրութեանը, որը հակասում է դաշնագրերին։ Տիսայի ճառից միայն կարելի է եզրակացնել, որ Բոլգարիայում տիրող այժմեան կարգերը շատ էլ անհաճելի չեն Աւստրիայի և նրա դաշնակիցների համար։ Ռուսաստանի պրոգրամն մնացել է նախկինը և կայանում է հետեւեալի մէջ. դահընկէց անել Կոբուրգեան պրինցին, դումարել օրինական ազգային նոր ժողով, և ընտրել տալ մի նոր իշխան, որ ընդունվի Եւրոպայի կողմից։

—Բերլինից հեռագրում են, որ մինիստր Պուտկամէրի դրութիւնը շատ անհաստատ է, որովհետև սոցիալիստների վերաբերեալ օրէնքների քննութեան ժամանակ երևեցաւ, որ մի քանի դէպքերում կառավարութեան օրգանները գործել են իբրև ղրղող-գործակալներ։ Այդ բանը մեծ աղմուկ է բարձրացրել։

—Գերմանական մի քանի լրագիրներ հաղորդում են, որ կառավարութիւնը վճռել է պետութեան արևելեան սահմանի վրա երկաթուղային մի քանի նոր գծեր անցկացնել։

—Վիէննալի ռուսաց դեսպան իշխան Լոբանով-Բոստովսկի նորերս՝ «Figaro» լրագրի թղթակցի հետ խօսելով քաղաքական գործերի մասին, այն միտքն է յայտնել, որ Կոբուրգեան պրինցը չուտով կը հեռացնվի Բոլգարիայից։

—Նիւ-Եորկում յունվարի 18-ին տհաղին հրդեհ է եղել, որի պատճառած վնասը, ինչպէս հեռագրում են այնտեղից, 3 միլիոն դոլարից անցնում է։

—«Journal de Genéve» լրագրին գրում են Լօնդոնից հետեւեալը։ «Յունվարի 9/21-ին Լօնդոնի յոյն կոլոնիան տօնեց լորդ Բայրոնի ծննդեան հարիւրամեակը, հոդեհանդիսատ կատարելով Բայրոնի յիշատակին Լօնդոնի յունաց եկեղեցում։ Եկեղեցում ներկայ էին յունաց դեսպան պ. Գէննադիոս և յունաց կոլոնիայի բոլոր անուանի մարդիկ։ Լօնդոնում գտնվված հայերն էլ, ուզենալով մի կողմից վկայել յունաց հետ իրանց ունեցած համերաշխութեան զգացմունքի մասին, իսկ միւս կողմից ցոյց տալ թէ որչափ պաշտում են Բայրոնի յիշատակը (որ ինչպէս յայտնի է մեծ համակրութեամբ էր վերաբերվում դէպի հայերը, մեծ գովասանքով էր խօսում հայերի մասին և մինչև անգամ Վենեցիայի Մխիթարեանների մօտ հայերէն լեզուն և պատմութիւնն էր ուսումնասիրում), իրանց կողմից էլ պատգամաւորներ ուղարկեցին, որոնք ներկայ էին եկեղեցում՝ յոյների կողմից կատարված հանդիսին։»

—Շվէյցարիայի Բազէլ քաղաքում գերմաներէն լեզուով հրատարակվող մի լրագիր, աչքի առջև ունենալով այն վտանգը որ այժմ սպառնում է Գերմանիայի կողմից եւրոպական բոլոր չէզոք պետութիւնների, ի միջի այլոց և Շվէյցարիայի անկախութեանը, նորերումս իր յօդուածներից մինի մէջ առաջարկել է որ Շվէյցարիան քաղաքական դաշն կապի Ամերիկայի Միացեալ Նահանգների հետ, որպէս զի Շվէյցարիան ճանաչվի Ամերիկայի մեծ հանրապետութեան միացեալ նահանգներից մին, մի և նոյն ժամանակ պահպանելով, ի հարկէ, իր առաջվայ ներքին քաղաքական կազմակերպութիւնը։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Գերմանացի յայտնի կրիտիկոս, բեմական գրող և հրապարակախօս Պաուլ Լինդաու, որը մի և նոյն ժամանակ «Nord und Süd» ամսագրի խմբագիր և «Kolnische Zeitung» լրագրի թղթակից է, պատմում է, թէ ինչպէս ինքն զարմացաւ իմանալով, որ Լէյպցիգի բանկերից մէկում թղթակցի պաշտօն ունեցող մէկը այնքան ռոճիկ է ստանում, որքան սակաւնական զօրքի գեներալը։

—Ասեցէք խնդրեմ,—դիմեց Լինդաու բանկի դիրեկտորին,—ինչպէս կարելի է այդքան ահագին ռոճիկ տալ մի այնպիսի հասարակ աշխատութեան համար, որպէս թղթակցութիւնների գրելն է. դրա համար ոչ նուրբ խելք է հարկաւոր և ոչ գրականական վարժ և գեղեցիկ լեզու. այդ գրագրութիւնների ամբողջ բովանդակութիւնը հետեւեալն է. «Վճարեցէք մեր հաշվին այսքան», գնեցէք մեզ համար այս ինչ արժէթղթերը», «վճարեցէք մեզ մեր այսքան պարտքը» և այլն։

Բանկի դիրեկտորը ժպտաց։

—Չէք ցանկանում արդեօք,—հարցրեց նա Լինդաուին,—փորձել մի քանի այդպիսի նամակներ գրելու։ Դուք շատ լաւ գիտէք գերմանական լեզուն և գեղեցիկ էլ գրում էք, իսկ բովանդակութիւնը ես ձեզ կը պատմեմ։ Եթէ նամակները բաւարացուցիչ կը լինեն, ես պատրաստ եմ բանկի թղթակցի պաշտօնը տալ ձեզ մինչև անգամ գեներալական ռոճկից աւելի մեծ ռոճկով, մանաւանդ որ այժմ մեզ մի թղթակից է հարկաւոր։ Լինդաու համաձայնվեց իսկոյն գրել նամակները։ Բանկի դիրեկտորը մի քանի նամակներ գրեց նրա առաջ, ասեց թէ ինչ պէտք է պատասխանել այդ նամակներին, և հեռացաւ։ Մի քանի ժամից յետոյ Լինդաու ժպիտը երեսին մըտաւ դիրեկտորի առանձնասենեակը։

—Բոլոր նամակները պատրաստ են,—ասեց նա ժպտալով։

Դիրեկտորը աչքի անցրեց նրա գրածները և սարսափեց։

—Պ. Լինդաու, ձեր ոչ մէկ նամակը երեք երեսից պակաս չէ։ Եթէ մենք մեր կլիէնտներին ձանձրացնենք այդպիսի երկար նամակներով, այն ժամանակ նրանք բոլորն էլ կը կորեն մեզանից իրանց յարաբերութիւնները։ Առևտրական աշխարհում, ինչպէս դուք գիտէք times is money (ժամանակը փող է)։

—Ներեցէք, — նկատեց Լինդաու,—անկարելի էր ձեր հաղորդածը 10 կամ 20 տողերի մէջ ամփոփել։

—Ցեսնենք,—ասեց դիրեկտորը էլէկտրական զանգը հնչեցնելով։ Դիրեկտորի առանձնասենեակը մտաւ բանկի թղթակիցը, հէնց նա, որը «գեներալական» ռոճիկ էր ստանում։ Դիրեկտորը հրամայեց թղթակցին անյապաղ գրել նոյն նամակները։ Մի ժամ չանցաւ, և ահա թղթակիցը երեւեցաւ պատրաստի նամակներով։

—Պատրաստ է,—զարմացաւ Լինդաու։ Դիրեկտորը առանց մի բառ արտասանելու տուեց նամակները կրիտիկոսին։

«Հէնց այդտեղ,—պատմում է Լինդաու,—ես առաջին անգամ համոզվեցայ, որ առևտրական թղթակցութիւնն ես մասնագիտութիւն է, որ այդ մասնագիտութիւնը ամեն մարդու բան չէ, և որ լաւ թղթակից դառնալու համար «առևտրական տաղանդ պէտք է ունենալ։»

* * *

Մեր վաճառականներից մի քանիսը, ասում է «Новости» լրագիրը, շատ սիրում են երկար նամակներ գրել։ Այդ առիթով պատմում են, թէ մէկ անգլիացի, որը Պետերբուրգի առևտրական մի մեծ ֆիրմայի գլխաւոր էր, դիմեց մի նամակով Աստրախանի Մ. վաճառականին, որը շատ սիրում էր երկար նամակներ գրել, որի մէջ անգլիացին գրում էր թէ «որովհետև ձեր նամակների կարդալը միջին թւով մի ամբողջ ժամ ժամանակ է խլում, այդ պատճառով խնդրում եմ ձեզանից «վարձատրութիւն ուղարկել ձեր իւրաքանչիւր նամակը կարդալու համար»։

* * *

Ռուս կանանցից մի քանիսները արտասահմանում գիտնականի համբաւ ունեն։ Օրինակ, տիկին Կովալէվսկայա, որը պրոֆէսորի գիտնական աստիճան ունի և դասախօսութիւններ է կարդում Ստօկհօլմի համալսարանում, Փարիզ եղած ժամանակ մեծ հանդիսով ընդունվեցաւ Ֆրանսիական գիտութիւնների ակադեմիայի նիստի մէջ։ Բոլոնիայի համալսարանում, սլաւոնական լեզուների ամբիոն ունի ռուս-գիտնական տիկին Օգանովսկայա։ Մեծ հռչակ է վայելում նոյնպէս ռուս տիկին Նովիկովա Անգլիայի գիտնական և քաղաքական աշխարհում։ Տիկին Զինաիդա Բագոզինա մեծ հռչակ է վայելում Ամերիկայում։ Մէկ տարի առաջ Նիւ-Եորկի հրատարակիչ Պուտման հրատարակեց այդ կնոջ «գիտնական մենոգրաֆիաների» առաջին հատորը. այդ հատորը նուիրված է Քաղդէայի պատմութեանը։ Գիրքը միանգամից դարձրեց իր վրա գիտնական ընկերութիւնների ուշադրութիւնը, որոնք գրքի հեղինակին առաջարկեցին փարիզի էնտիմօլոգների ընկերութեան և Նիւ-Եորկի արեւելագէտների ընկերութեան անդամի կոչումը։ Այժմ արդէն լոյս տեսաւ նոյն հեղինակի գիտնական հեղհեղութիւնների երկրորդ հատորը, որը նուիրված է Ասորեստանի պատմութեանը։ Ըստ երևոյթին, այդպիսի մասնագիտական աշխատանքներ պէտք է մեծ աջողութիւն չունենային մանաւանդ Ամերիկայում, սակայն տիկնոջ բոլոր գրքերը ծախվեցան և տիկնոջ երկրորդ աշխատանքը առաջինից աւելի շքեղ հրատարակվեցաւ։ Ի հարկէ, երկու հատորներն ևս անգլիերէն են գրված։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 յունվարի։ Ներքին գործերի մինիստրը որոշեց. նորից թոյլ տալ «Сынъ Отечества» և «Минута» լրագիրների հատով ծախելը, որը արգելված էր 1887 թ-ի սեպտեմբերի 30-ին։ Երէկ Զմեռնային պալատում պարահանդէս կար, որին ներկայ էին 700 հրաւիրվածներ։ Լրագիրների ստացած տեղեկութիւններին նայելով, ուղղակի տուրքերի դեպարտամենտի մէջ յունվարի 30-ին հիմնվելու է մի առանձին յանձնաժողով, որը պէտք է քննի սպիրտի արտահանման զարգացնելու հարցը։ «Новое Время» լրագրի խօսքերով, պետական կալուածների մինիստրութեան մէջ այժմ քննվում է՝ Բաթումի շրջանը ռուս գաղթականներով բնակեցնելու հարցը։ Ցիշեալ շրջանը կայսրութեան հետ միացնելու ժամանակից սկսած, այնտեղ արդէն կազմվել են մի քանի ռուսաց գիւղեր, և ներկայումս նահանգական գլխաւորի վարչութեանը ներկայացրած է մինչև 1,000 խնդրագիր՝ հողաբաժին տալու համար. տեղական իշխանութիւնը այդ խնդրագրերից միայն 500-ին է կարելի համարում լիութիւն տալ. հողաբաժնի քանակութիւնը կը լինի 2-ից մինչև 6 դեսեատին։ Աւստրո-գերմանական դաշնագրի հրատարակութիւնը շատ տեսակ դիտողութիւններ է առաջ բերել արտասահմանի մամուլի մէջ. Բերլինի և Վիէննայի լրագիրները այդ դաշնագրի հրատարակութեան մէջ մի խաղաղասիրական ցոյց են տեսնում. Ֆրանսիական լրագիրներից «Debats» լրագիրը այդ հրատարակութիւնը համարում է իբրև մի թնդանօթի հարուած, և ոչ թէ իբրև մի խաղաղասիրական համբաւ. «Temps» լրագիրը հարցնում է, թէ արդեօք Աւստրիան պատերազմի պատճառ կը համարի Ռուսաստանի բոլգարական գործերի մէջ խառնվելը. «Paris» այդ հրատարակութիւնը համարում է իբրև մի խաղ Բիսմարկի կողմից, որով նա ուզում է ստանալ ռեյխստագից 280 միլիոնի փոխառութեան իրաւունքը։

ԹԱՐԿՕՎ, 25 յունվարի։ Այսօր սկսվեցան համալսարանում դասախօսութիւնները։

ՄԵՐՎ, 25 յունվարի։ Մեշխեդի անգլիական զինուորական գործակալ գնդապետ Մակելանի հսկողութեան ներքոյ գտնվող Էյուբ-խանը այս օրերս տարվեցաւ այդտեղից Հնդկաստան։ Փողի պակասութիւնը և անապատի մէջ թափառելը ստիպեցին Էյուբ-խանին անձնատուր լինել անգլիացիներին, որոնք նշանակել են նրան բաւական մեծ թոշակ, մինչև նրա կեանքի վերջը։

ԲԵՐԼԻՆ, 26 յունվարի։ Ռէյխստագի մէջ այսօր տեղի ունեցաւ փոխառութեան օրինագծի առաջին ընթերցումը։ Նիստին, իշխան Բիսմարկ, ի միջի այլոց, ասեց. «Ես խօսում եմ, որպէս զի արդարացնեմ իմ մտքերը Եւրոպայի ընդհանուր դրութեան մասին. սրանից մի տարի առաջ մենք երկիւղ էինք կրում Ֆրանսիայի հետ պատերազմ ունենալուց. բայց դրանից յետոյ Ֆրանսիայում երևան եկաւ խաղաղասիրական տրամադրութիւն։ Ես կարող եմ հանդստացնել հասարակական կարծիքը. դէպի Ֆրանսիան ունեցած հայեացքները խաղաղասիրական են դարձել։ Մենք առիթ չունենք երկիւղ կրելու Ռուսաստանի յարձակումից. Կայսր Ալէքսանդրի խօսքին հաւատում եմ անպայման։ Ռուսաց զօրքերի սահմանագլխի վրա կենտրօնանալը կարող է վտանգաւոր երևալ, բայց ռուսական կամ եւրոպական պատերազմի ոչինչ առիթ չեմ տեսնում. Ռուսաստանը ոչինչ չահ չունի տիրապետելու պրուսական կամ աւստրիական նահանգները. մինչև անգամ Ֆրանսիայի հետ պատերազմ ունենալը առաջ չի բերի պատե-

բաղմ Ռուսաստանի հետ։ Զը նայած փոթորիկի բոլոր նշաններին, երեք կայսրների մէջ եղած մօտիկ յարաբերութիւնների շնորհով, հասել է ակնյայտնի հանդստութիւն։ Այնու ամենայնիւ, մենք պէտք է մեծացնենք մեր ոյժերը, որպէս զի պահպանենք մեր արժանապատուութիւնը և երկիրը։ Այդ նպատակի համար ոչ մի զոհ չէ կարող շատ ծանր համարվել։ Ֆրանսիայի և Ռուսաստանի ցոյցերը ստիպում են մեզ պաշտպանվել։ Մենք բոլոր ազգերից աւելի աջող կերպով կարող ենք դիմադրական սաստիկ հարուած տալ մեր հակառակորդներին։ Պրուսիան միշտ աշխատել է լաւ յարաբերութիւններ պահպանել Ռուսաստանի հետ, և ես միշտ սիրով եմ հոգացել այդ աւանդական յարաբերութիւնների զարգացման համար. բայց և այնպէս Ռուսաստանը սառել է։ Ես այդ մասին խօսում եմ, որպէս զի հասկանալի լինի, թէ ինչու մենք դաշն կապեցինք Աւստրիայի հետ։ Ես չը կարողացայ հեռացնել մեզանից Աւստրիային, և եթէ ես այդ բանը անէի, այն ժամանակ մենք առանձնացած կը լինէինք Եւրոպայում, և անպայման կերպով կախված կը լինէինք Ռուսաստանից։ Դաշնագրի հրատարակութեան մէջ ոմանք տեսնում են և սպառնալիք. բայց այդ դաշնագիրը ծառայում է իբրև մի արտայայտիչ, որ երկու դաշնագրող կողմերի շահերը ընդհանուր են։ Մեր դաշնագիրը Իտալիայի հետ միմիայն շահերի և ձգտումների արտայայտիչ է՝ դիմադրելու ընդհանուր վտանգին, և միասին պաշտպանելու խաղաղութիւնը։ Աւստրիան—մեր բնական դաշնակից է այն վտանգների ժամանակ, որոնք մեզ սպառնում են Ռուսաստանի և Ֆրանսիայի կողմից։ Ռուսաստանի ատելութիւնից վախենալու առիթ չը կայ. ատելութեան պատճառով պատերազմ չի լինի։ Այն ոյժը, որ մենք ունենք, կը հանդստացնի հասարակական կարծիքը. մեծացնել այդ ոյժը,—ահա մեր գործը։ Ներկայացրած օրինագծերի շնորհով մենք կարող կը լինենք մեր իւրաքանչիւր սահմանի վրա դուրս բերել մի-մի միլիոն լաւ զինուորներ. իսկ դոցա ետև կանգնած է մեր պահեստը։ Մեր օֆիցերների խումբը այնպիսին է, որպիսին չունի ոչ մի պետութիւն։ Եթէ մենք պատերազմ կը սկսենք, այդ պատերազմը պէտք է լինի ժողովրդական պատերազմ։ Ոչ մեր ոյժը, և ոչ էլ մեր յաղթութեան հաւատը չեն չեղի մեզ մեր նախկին խաղաղասիրական ձգտումներից, և ես յոյս ունեմ, որ մենք մեր հարևանների, մանաւանդ Ռուսաստանի հետ, խաղաղ յարաբերութիւնների մէջ կը մնանք։ Բուլգարիայի վերաբերութեամբ մենք կատարելապէս հետևողաբար ենք վարվել, և եթէ Ռուսաստանը պահանջէր մեզանից, որ մենք պաշտպանէինք Սուլթանի առաջ նրա այն միտումները Բուլգարիայի վերաբերութեամբ, որոնք հիմնված են Բերլինի կոնգրէսի որոշումների վրա, ես չէի տատանվի կատարելու այդ»։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 յունվարի։ Կովկասեան կառավարչապետի դիւանատան փոխ-դիրեկտոր Բոգդէ նշանակված է Բաքուի նահանգապետ։—Երէկ վախճանվեցաւ Պետերբուրգի բելգիական դեսպան Երամբո-Դիւդէլ։—Երէկ ուղևորվեց դէպի իր պաշտօնատեղին Բերլինի ռուսաց դեսպան կոմս Շուվալով։ Այս օրերս կը խմբվեն Պետերբուրգում հաղորդակցութեան ճանապարհների բոլոր շրջանապետները, խորհրդակցելու այն անհրաժեշտ աշխատանքների համար, որոնք վերաբերում են ջրային ճանապարհների վերանորոգութեանը։—«Гражданинъ» լրագիրը հաղորդում է, որ արդէն երկու նիստ ունեցաւ գեներալ-նահանգապետների յանձնաժողովը, որը քննում է զօրաբանակի բարձրագոյն կառավարութեան կազմակերպութեան հարցը պատերազմական ժամանակի՝ պատերազմական գործողութիւնների վերաբերութեամբ։

ՄԷՐՎ, 26 յունվարի։ Հերաաի շրջանում շինվող անգլիական ամրութիւնները չափազանցրած են.—թումբերը և միջնաբերդերը չինվում են հողից և զօրեղ ամրութիւններ չեն ներկայացնում—կաբուլից հաղորդում են, որ անգլիացիների ազդեցութիւնը Աբդուրահմանի վրա վերջին ժամանակներս շատ մեծացել է։ Գիլզայների և ֆարտուխների յուզմունքը շարունակվում է։

ԲԵՐԼԻՆ, 26 յունվարի։ Պրինց Վիլհելմ, պալատականները և դիպլոմատիայի ներկայացուցիչները ներկայ էին այն ժողովին, որի ժամանակ Բիսմարկ իր ճառը ասեց։ Երբ Բիսմարկ աւարտեց իր ճառը, Ֆրանկենշտէյն, Բէնինգսեն պատգամաւորները և ուրիշները առաջարկեցին ժողովին ընդունել զինուորական օրէնքը ամբողջութեամբ, և քաղաքական հանգամանքները ի նկատի ունենալով՝ չը մտնել որ և է վիճաբանութեան մէջ՝ փոխառութեան հարցի առիթով։ Դրանից յետոյ սկսվեց զինուորական օրէնքի երկրորդ ընթերցումը։ Բիսմարկ ասեց, որ գերմանական կառավարութիւնները երախտապարտ կը լինեն պարլամենտին նրա նախաձեռնութեան համար, ոչ թէ իբրև վստահութեան ապացոյցի, այլ իբրև խաղաղութեան պահպանութեան ուժգին դրաւականի համար։ Այդ յայտնութիւններից յետոյ, օրէնքը երկրորդ ընթերցանութեան մէջ ընդունվեցաւ առանց առարկութիւնների. թնդացին ոգևորված ծափահարութիւններ։ Բիսմարկ, պարլամենտի շինութիւնից դուրս գալիս հանդիպեց ցոյցերի հազարաւոր մարդկանց կողմից։ Բիսմարկ ուրախ տրամադրութեան մէջ էր։

ԲՈՒԽԱՐԵՍՏ, 26 յունվարի։ Պարլամենտական այժմեան ընտրութիւնների ժամանակ կառավարչական կուսակցութիւնը յաղթող հանդիսացաւ։

Կ. ՊՕԼԻՍ, 26 յունվարի։ Հրատարակված է Սուլթանի իրադէն, որը հաստատում է Սուէզի ջրանցքի անգլօ ֆրանսիական պայմանագրի մէջ մտցրած փոփոխութիւնները։

ՎԻԵՆՆ, 27 յունվարի։ Աւստրիական բէյխսրատի բիւդժէտային յանձնաժողովում ազգային պաշտպանութեան մինիստր Վէյսերսհէյմ յայտարարեց լրացուցիչ կրէդիտի մասին լանդվէրի զընդային շտաբներ կազմակերպելու համար. մի և նոյն ժամանակ Վէյսերսհէյմ ասեց, որ աւստրո-գերմանական դաշնագրութիւնը պարտաւորութիւն է դնում Աւստրիայի վրա՝ հոգալ իր զինուորական ոյժերի զարգացման մասին։ Սակայն, Աւստրիան յարձակողական նպատակներ չունի, այլ, ի նկատի ունենալով բոլոր երկիրների զինաւորութիւնները, ցանկանում է միայն զօրեղացնել իր զօրքի պատերազմական պատրաստութիւնը։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Յունվարի 26-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ. .	116 ր.	40 կ.
Համբուրգի վրա 100 մարկ — . .	57 »	— »
Փարիզի վրա 100 ֆրանկ — . .	46 »	— »
Ոսկի — արժէ — . .	9 »	28 »
Մաքսային կուպօններ — . .	186 »	25 »
Արծաթ — — — . . .	1 »	32 »
Բորսային դիսկօնտներ — .	6½ և	7½% »
Պետակ. բանկ. 5% տոմս. 1-ին չրջանի	99 »	75 »
— — — — 2-րդ —	98 »	— »
— — — — 3-րդ —	98 »	— »
— — — — 4-րդ —	98 »	— »
— — — — 5-րդ —	98 »	— »
— — — — 6-րդ —	— »	— »
Նոր 4% փոխառութիւն	82 »	— »
Արևելեան 5% փոխառութ. 1-ին չրջ.	98 »	12 »
— — 2-րդ —	97 »	50 »
— — 3-րդ —	97 »	50 »
Ներքին 5% առաջին փոխառութ.	265 »	50 »
— երկրորդ —	248 »	75 »
5½% բէնտա	103 »	— »
Ոսկեայ բէնտա	194 »	50 »
Եօթերորդ կօնսօլիդած փոխառութիւն.	164 »	75 »
Նոր երկաթուղային բէնտա . . .	97 »	75 »
5% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ.	164 »	— »
Գրաւ. թղ. Ազնւ. բանկի . . .	97 »	87 »
5½% գրաւական թղթեր խերսօնի կալուած բանկի.	98 »	50 »
6% գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան.	101 »	75 »
— — Պոլտավայի— —	101 »	50 »
— —Պետ.Տուլսկ.— —	101 »	50 »
— — Կիեվի — —	101 »	87 »
— — Մոսկվայի — —	102 »	— »
— — Բեսարաբ. Տավր.—	101 »	— »
— — Նիժ. Սամար. —	101 »	— »
— — Վիլնայի —	101 »	— »
— — Թիֆլիսի—27 և 43 տ.	— »	— »
— —Ռոթայիսի-18 և 43 տ.	— «	— »
Վոլժսկո-Կամսկի բանկի ակցիաները	692 »	— »
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.	226 »	25 »
Ռիբինսկ-Վոլոգդի ընկ.	86 »	75 »
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ.	94 »	50 »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ .	94 »	50 »
Սդէսայի — — .	93 »	50 »
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ. .	— »	— »

Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը ամրանում է։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պ. ԲՕՈՒԴԻԿ

Իր ընտանիքի հետ միասին տալիս է ԶԵՐՆԱԾՈՒԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ, շատ չափաւոր գներով։ Կարելի է նրան հրաւիրել մասնաւոր ուսումնարանական հիմնարկութիւններ այդպիսի ներկայացումներ տալու համար։ Հասցէն հետևեալն է. Вѣрінскіе номера, Ольгинская улица, № 14 1—2

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Հինգշաբթի, փետրվարի 4-ին, ՄԵՈԶ (MEUSE) շոգենաւը, նաւապետ ԹԻԲԱԼ (THIBAL) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պոլիս և Մարսէյլ։ Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմլիոզլուի տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում պ. Բէնօին, նախկին Արծրունի դպրեվանքում, № 103. 3—4

Արդէն ծախվում են կատարելագործված, սպիտակ բոցով, անվտանգ

ՇՎԷԴԱԿԱՆ ԼՈՒՑԿԻՆԵՐԸ

ԱՄԵՆԱԷԺԱՆ ԳՆՈՎ։

Մեծ քանակութեամբ առնողներին ՆՇԱՆԱՒՈՐ ԶԻՋՈՒՄՆ ԿԸ ԼԻՆԻ։

Գործարան Գ. Ա. ՏԷՐ-ԱՍԱՏՈՒՐԵԱՆԻ և ընկերութեան, Թիֆլիսում, ՎԷՐԱ կոչված թաղում։ 15—50

ГАРМОНИКИ

ВНОВЪ ОТКРЫТАЯ ГАРМОННАЯ МАСТЕРСКАЯ

В. Д. Грецова, выдерживая огромную конкуренцію, назначаетъ цѣны на гармоніи очень низкія. Желая доставить возможность иногороднымъ мелкимъ торговцамъ получать гармоніи изъ первыхъ рукъ, высылаетъ имъ по письменнымъ требованіямъ и небольшими партіями, но не менѣе какъ на 25 рублей. Требованія безъ задатка въ 15% невыполняются. Цѣны отъ 13 коп. до 10 рублей.

Адресовать: Тула, улица Веневская, домъ Рылѣевой, В. Д. Грецову. 2—2 (հ)

ЗУБНЫЯ СРЕДСТВА А. ШТЕХЕРЪ
ПОДОЛЬСКІЯ ЗУБНЫЯ КАПЛИ
КОРОБКА 50 и 80 К.
ГИГІЕНИЧЕСКІЙ КОКАИНОВЫЙ ЗУБНОЙ ЭЛИКСИРЪ
БОЛЬШ. ФЛАКОНЪ 80 К.
ГИГІЕНИЧЕСКІЙ ЗУБН. ПОРОШОКЪ
КОРОБКА 30 К.
СКЛАДЪ ВО ВСѢХЪ АПТЕКАХЪ и АПТЕК. МАГАЗ.

ՊՐՕՎԻԶՈՐ Ա. ՇՏԷԽԵՐԻ ՄԻԶՈՑՆԵՐԸ

ԱՏԱՄՆԵՐԻ ՑԱՒԻ ԵՒ ՓԶԱՆԱԼՈՒ ԴԷՄ

ՊՕԴՕԼԵԱՆ ԱՏԱՄՆԱԴԵՂ ԿԱԹԻԼՆԵՐ 80 ԿՕՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՕԿԱՑԻՆԵԱՆ ԱՏԱՄՆԱՑԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՕՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՑԻՆ ՓՈՇԻ 30 ԿՕՊ.

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ. ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Կովկասեան դեղավաճառատան, և պ. պ. Շահպարոնեանցի, Մակկէրի, Սէնչիկօվսկու և Ադմուրովի դեղատներում։ ԲԱԳՈՒԻ ՄԷՋ՝ Բէկկէրի մօտ, ՔՈՒԹԱՅԻՍՈՒՄ՝ Կօկօչեվի մօտ, ՍՏԱՎՐՕՊՕԼՈՒՄ՝ Բրօխնօցկու մօտ և ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐՈՒՄ։ (հ.)

ВЫСОЧАЙШЕ Утвержденное Кавказское Товарищество торговли аптекарскими товарами въ Тифлисѣ (Графская ул., домъ бывш. Шабурова).

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԴԵՂԱՏԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՄԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԵՒ ԲԱԳՈՒԻ ՄԷՋ։

ՀԱՆՔԱՑԻՆ ԶՐԵՐ, Կովկասեան և արտասահմանեան, այս գարնանը չիչերի մէջ նոր ածված-ցեցից եւ միջատներից պաշտպանող միջոցներ, Նաֆթալին, քսմֆօրա, ցեց ոչնչացնող հեղուկ, Պարսկական և Դալմաթիայի փոշի, և Բուրէլի անթեմ կոչված բոյսը։

ՕԴԸ ՄԱՔՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ պրօֆէսօր ԿԻՏՏԱՐԱՑԻ, կարբոլացրած փոշի երկաթի արճասպով, որպէս ամենալաւ միջոց անմաքրութեան տեղերը խտակելու համար, կարբոլեան թթուտ, մաքրված և չը մաքրված տեսակից, խլօրային կիր, ծծումբ, երկաթի արճասպ և Մարգանեցի կրկնաթթուտ։ 82—100 (հ.)

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՅԼՏԻՈՒԹԻՒՆ ՍՏԱՑԱԾ

ՀՆԴԿԱԿԱՆ ՄԿՆԴԵՂ

ՄԻՇՈՒՆԱՑ

ՄԵԾ ԵՒ ՓՈՔՐ ՄԿՆԵՐԸ կատարելապէս ոչնչացնելու համար։ Արկղիկի գինը 1 ր. 50 կ. Արկղիկի ¼ արժէ 60 կ.։

Հեղուկ բաղլինջների դէմ։ Սրուակի գինը, վրձինով միասին 1 բուբլի։

Լուս, ցեց, բողոճ ոչնչացնելու փոշի։ Դոտակի գինը 1 ր. 20 կ. գուտապէրչի մեքենան առանձին. ½ դօրակ 65 կ.

Սմբակային օծուն, Բիս Գուտմանի, ձիերի սմբակները ամեն օր օծելու համար, պահպանում է սմբակը ճաքելուց և նալելու միջոցին թուլանալուց։ Դօրակի գինը 1 բուբլի։

Կուղբի ճարպի օծուն, պահում է խոնաւութեան դէմ և կակուղ դրութեան մէջ՝ կօշիկները, բոտինները, ձիերի սանձերը։ Գինը 75 կոպ.

Մաղերի ներկ, սև, շագանակագոյն և շէկ Մի անգամ ներկված մաղերը իրանց գոյնը պահում են մինչև վեց շաբաթ։ Ներկված մաղերը չէ կարելի զանազանել բնական մաղերից։ Արկղիկը 3 բուբլի.

Բիս. Գուտման

Գլխաւոր պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվում է Վ. Գրիվնակի դեղատան ապրանքների մագազինում, «Լօնդօն» հիւրանոցի տակ, Զուբալովի տանը։ 81—100

ՄԻ ՀԱՑ, որ առաջ վաճառական է եղել ԹԻՖԼԻՍՈՒՄ և ծանօթ է Թիֆլիսցիներից շատերին, դիմում է այժմ տեղիս վաճառականներին, խնդրելով որ և է պաշտօն տալ իրան, մի վաճառատան, խանութում, կամ գրասենեակում։

Հասցէն իմանալ „Մշակի“ խմբագրատանը։ 2—3

Дозволено цензурою, Тифлисъ 27 января 1888 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.